№ 34 Մարտի 7 (19) 1879 Մարտի 7 (19) № 34

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այսպէս չէ կարելի շարունակել։—Ներքին տեսութիւն։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա, Անգլիա։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Ցեղեկացոյց։—Բանասիրական։ Հայ կինը։

ԱՅՍՊԷՍ ՉԷ ԿԱՐԵԼԻ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ

Մենքը տեսնում են որքան լաւ է գնում «Արարատեան ընկերութեան» համար ստորագրութիւնը, որքան հմակրում են Ռուսաստանի հայերը իրանց թիւրքիաբնակ եղբայրների լուսաւորութեան գործին։

Բաւական չէ որ ռուսաստանցի հայը իր կենդանութեան ժամանակ միանուագ կամ մշտական նուիրատուութիւններ է անում «Արարատեան ընկերութեան», բայց կտակների մէջ էլ հայերը սկսել են բաւական նշանաւոր գումարներ նուիրել յօգուտ նոյն ընկերութեան։

Բաւական չէ որ հայը համակրում է այդ գործին, որ իսկապէս նրա պարտաւորութիւնն է, բայց ընթերցողը կը տեսնի նուիրատուների վերջին շատ ցուցակներում ռուս և գերմանական ազգանուններն անգամ։

Այդ բոլորը շատ և շատ ուրախալի է, շատ ուրախալի է նրմանապէս որ ռուսաց հասարակական կարծիքը, գուցէ ռուսաց լրագրութեան մի յայտնի մասի ներգործութեան տակ, որտեղ ամենապատուաւոր տեղը բռնում է «Голосъ» լրագիրը, սկսում է համակրել այն ասիական քրիստոնեայ ազգի լուսաւորութեան գործին, որ նոյնքան արժանի է Եւրոպայի ուշադրութեան, որքան թիւրքաց տիրապետութեան տակ մնացած և միւս քրիստոնեայ ազգութիւնները....

Բայց, այնու ամենայնիւ, ինչքան էլ լաւ գնար «Արարատեան» ընկերութեան համար հաւաքվող նուիրատուութիւնների գործը, ժամանակով այս գործը այժմեան ձևով առաջ գնալ չէ կարող։

Մինչև այժմ ռուսաց հայերի մէջ «Արարատեան» ընկերութեան ներկայացուցիչը միմիայն «Մշակն» էր։ Նա է տանում ամբողջ գործը, նրան են յանձնվում բոլոր նուէրները։

Ոգևորութիւնը նուիրատուների կողմից մեծ է,—այդ ընդունում ենք։ Բայց արդեօք ո՞վ կարող է երաշխաւոր լինել, թէ այդ ոգևորութիւնը նոյն չափով շարունակվելու է, որ այդ ոգևորութիւնը տևողական է և ոչ թէ ժամանակաւոր, ոչ թէ մի մօդայի գործ....

«Մշակը» գոյութիւն ունի, և քանի գոյութիւն ունի մեր լրագիրը նա շարունակելու է, իր կարողութեան չափ, նպաստել իր գործունէութեամբ «Արարատեան» ընկերութեան գործունէութեանը.... մինչև որ այդ ընկերութիւնը գոյութիւն կունենայ և ազնութեամբ առաջ կը տանի իր գործը։ Բայց ո՞վ կարող է երաշխաւոր լինել, դիցուք, թէ ինքն «Մշակը» միշտ կը շարունակի գոյութիւն ունենալ....«Մշակն» է դրդել հայի ոգևորութիւնը դէպի «Արարատեան» ընկերութիւնը, բայց գուցէ նոյն ինքն «Մշակը» մի օր ստիպված կը լինի դադարեցնել իր գոյութիւնը։ Հատ տեղ հայը համակրելով լրագրից յարուցած մտքին, մի և նոյն ժամանակ նոյն իսկ լրագրին չէ համակրում և չէ պահպանում նրան, այլ անվարձ կարդալով մեր լրագիրը, իր նիւթական միջոցներով օգնում է մի որ և է այլ հայոց, թէ օտարազգի լրագրին....

Ինչ և իցէ «Արարատեան» ընկերութեան պէս մի ձեռնարկութեան օգնելու գործը, թէև ժամանակաւորապէս կարող է մի անձի ձեռքով կառավարվել, բայց առհասարակ դա մի անհատի ոյժերից վեր է, մի ամբողջ մասնաժողովի գործ է։

Մենք դեռ յոյս ունենք մի քանի անգամ վերադառնալ այդ խնդրի քննութեանը, բայց այժմ կասենք միայն որ եթէ մի լրագիր յանձն է առել «Արարատեան» ընկերութեան պէս մի ընդարձակ ձեռնարկութեան օգնելու ինիցիատիվ, այդ չէ նշանակում որ նա պէտք է և շարունակի մշտապէս այդ գործը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԻՆԸ

—

«Կինը է այն առանցքը, որի շուրջը պտտվում է քաղաքակրթութիւնը»

Ինձ շատ անգամ պատահել է կարդալ հատուկոտոր յօդուածներ հայ կնոջ մասին, շատ անգամ տեսել եմ նրա նկարագիրը փոքրիկ վէպիկների մէջ, բայց այդ բոլորը այն աստիճան անկատար են եղել և այն աստիճան հարևանցօրէն ներկայացրել են նրա տիպը, որ հաճիւ թէ ընթերցողը կարող էր ծանօթանալ ընդհանուր գծերի հետ։ Առհասարակ շատ սխալ կարծիքներ են կազմվել արևելքի կանանց մասին ընդհանրապէս, իսկ մեր մէջ հայ կնոջ մասին մասնաւորապէս։ Մինչև անգամ նշանաւոր հեղինակները, կամ պօեզիայով յափշտակված, նրանց պատկերացնում են որպէս հարեմի զարդարանք, որպէս ընտանեկան սրբարանի կուռքը, և կամ բոլորովին արհամարհելով, «ստրուկ» բառը տեղի և անտեղի կպցնում են նրանց ճակատին։ Եթէ «կինը է մարդկային ընկերութեան գլխաւոր քաղաքակրթիչ տարերքից մէկը»—որպէս ասում են գիտնականները,—ուրեմն պէտք է լաւ ուսումնասիրել նրան։ Եւ այդ կը լինի իմ հետազօտութեան նպատակը։

Ա.

Գեղջկուհին

Ես սկսում եմ գիւղացի կնոջից և գլխաւորապէս ի նկատի ունեմ Կովկասի հայ ազգաբնակութիւնը։ Բայց խնդիրը ինքն ըստ ինքեան շատ դժուարին է, մանաւանդ այն պատճառով, որ Կովկասի հայ ժողովուրդը բաղկանում է զանազան տարերքից,—առաւել Տաճկաստանի, Պարսկաստանի և ուրիշ երկրների գաղթականներից,—որոնց մէջ որքան խառնուրդներ կան, այնքան աւելի բազմատեսակութիւն կայ թէ բարքերի, թէ սովորութիւնների և թէ դէմքերի վերաբերութեամբ։

Կեանքը դեռ բոլորովին չէ միակերպվել, և այս պատճառով անհնարին է մի որոշ դասակարգի ներքոյ զետեղել ամենին։ Բայց բացառութիւնները միայն ցոյց տալով, մենք դարձեալ կը ստանանք մի ամբողջ նկարագիր, որովհետև ընդհանուր գծերը բոլոր գիւղացի կանանց մօտ, իրանց պատմական յատկանիշներով, համարեա մնացել են մի և նոյնը։

Շատ անգամ մարդ զարմանում է, մտնելով մի մեծ գիւղական ընտանիք. նա բաղկանում է քսան, երեսուն և երբեմն քառասուն հոգուց.—դա մի փոքրիկ պետութիւն է, որի մէջ տիրում է խորին ներդաշնակութիւն։ Ալևոր պապերը դարևոր հասակներով—թուով մի քանի եղբայրներ—դեռ կենդանի են. կենդանի են և ծերունի պառաւները։ Նրանց շրջապատել են որդիները, թոռները, ծոռները,—մի քանի սերունդ իրանց կնիկներով և զաւակներով։ Ընտանիքի պետը համարվում է նա, որ հասակով ամենից աւագն է, այսինքն «մեծ պապը». բոլոր անդամները հպատակում են նրա հեղինակութեանը։ Նրանից յետոյ երկրորդ տեղն է բռնում մեծ տատը, որի իշխանութիւնը տարածվում է աւելի կանանց հասարակութեան վրա։ Եւ եթէ դրանք չը կային, «մեծ պապին» յաջորդում է եղբայրներից երէցը, իսկ պառաւ տատին մեծ հարսը, այսինքն երէց եղբօր կինը։ Հնազանդութիւնը մինը միւսին ընտանիքի փոքրիկից սկսվում է աստիճանաբար դէպի բարձր, մինչև հասնում է այն անձինքներին, որ համարվում են գերդաստանի գլխաւորները։ Կանանց սեռը (բացի պառաւ տատից) զրկված են ձայնի իրաւունքից։ Այդ նախապատութիւնը պէտք է հասկանալ իր բառացի նշանակութեամբ. նրանք ոչ միայն չեն կարող խորհրդակցել տան պէտքերի մասին, այլ խօսելը անգամ արգելված է նրանց։

Այդ ընդհանուր նկատողութիւնից յետոյ ընտանիքի կազմակերպութեան մասին, ես դառնում եմ դէպի գեղջկուհին, սկսելով նրա ծնունդից։

Գեղջկուհին չէ ծնում դաշտումը, բաց օդի ներքոյ, խոտի դէզի տակ, թուփերի կամ արտի մէջ, և երկունքից յետոյ անմիջապէս սկսում իր աշխատութիւնը, որպէս այդ լինում է մինչև անգամ բաւական քաղաքակիրթ ազգերի գիւղացիների մէջ։ Ծնունդը մօտենալու ժամանակ մօր վրա խնամք են տանում, նրան հեռու են պահում ծանր աշխատութիւններից, թոյլ չեն տալիս, որ շալակ վեր առնէ, կամ աղբիւրից ջուր բերէ։ Երբ ծնաւ, մինչև մանուկի մկրտվելը, որ սովորաբար տևում է եօթն օր, մայրը անկողնի մէջ պառկած է մնում։ Եթէ ծնունդը տղայ էր, նրա անկողինը շրջապատում են մի խումբ պառաւներ, որոնք գործ են դնում իրանց ամբողջ կախարդական արհեստը մօր և նորածին մանուկի կեանքը անվնաս պահելու «չարքերից», «ալքերից», «քաջքերից», «դևերից», «մեղնից աղէկներից», «սատանաներից» և այլն։ Մանուկի օրօրոցը նոյնպէս զրահաւորում են բըժժանքներով, յուռութքներով, մահեկներով և մինչև անգամ տէրտէրի գրած «քըթիկներով»։ Իսկ աղջիկը զուրկ է մնում այդ նախախնամութիւններից։ Գիւղացին ծնունդի վրա չէ նայում որպէս մի բնական երևոյթի վրա, այլ նրա մասին ունի բազմաթիւ նախապաշարմունքներ։ Կնոջ անպտղաբերութիւնը նախատինք է համարվում և այս պատճառով ամեն մի ծնունդ, մանաւանդ տղայինը, թէ տղամարդի և թէ բարեկամների կողմից ընդունվում է ուրախութեամբ։ Մօրը կերակրում են արտաքոյ կարգի անսդարար կերակուրներով, որոնց մէջ առաջին տեղը բռնում է մեղրով պատրաստած ձուածեղը, որը նա ստանում է հարևաններից։ Իսկ աղջկայ ծնունդը հանդիպում է խուլ դժգոհութեան, բարեկամները չեն գնում շնորհաւորելու, կամ որպէս ասում են «աչքալուսանք» տալու ծնողներին։ Մեր գեղջկուհիքը ըստ մեծի մասին պտղաբեր են լինում։ Նրանք ծնում են երբեմն մինչև 40—45 տարեկան հասակը։ Ամուլ կինը պատիւ չունի որպէս ընտանիքի, նոյնպէս և հասարակութեան մէջ. նրա վրա նայում են որպէս չը բերք կովի վրա։ Գիւղացին շատ անգամ պարծենում է իր որդիների բազմութեամբ, որպէս իր կապիտալով։ Եւ որքան աւելի աճում է կնոջ զաւակների թիւը, այնքան նա կշիռ և իրաւասութիւն է ստանում ընտանիքի մէջ. «Ես տասն տղամարդի մայր եմ»—լսվում է շատ անգամ նրա բերանից։ Բայց ափսոս, որ երեխաների չափազանց մահացութիւնը, որ յառաջ է գալիս վատ պահպանելուց, չեն բաղդաւորացնում ամեն մայրերին։

Մայրը ինքն է ծիծ տալիս զաւակին, իսկ եթէ նա տկար էր, կամ կաթը պակաս էր, օգնում են հարևանի կնիկները։ Ծնելուց յետոյ մայ-

Մի անձն կարող է անհետանալ, մի լրագիր կարող է ոչնչանալ,—հարկաւոր է մի հաստատ ձեռնարկութիւն պահպանելու համար հիմնել մի ուրիշ հաստատ ձեռնարկութիւն, այսինքն մի մշտական մասնաժողով, ընկերութեան մի մշտական բաժին, յայտնի ժամանակով ընտրված անդամներից բաղկացած....

Ժամանակ է մոռածել ռուսաստանցի հայերին «Արարատեան» ընկերութեան մի մշտական բաժին հաստատել Թիֆլիսի մէջ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 5 մարտի

Անցեալ օր հրաւիրված լինելով պ. Ցարութիւնեանցի մօտ ճաշի, որտեղ ներկայ էին մի քանի մարդիկ, ես առաջարկեցի մի ստորագրութիւն յօգուտ «Արարատեան ընկերութեան» և ներկայ գտնվողները, մեծ ուրախութեամբ ընդունելով իմ առաջարկութիւնը, նուիրեցին այդ ընկերութեան օգտին 210 ռուբլ, որ ուղարկելով ձեզ կը խնդրեմ խոնարհաբար հասուցանէք ըստ պատկանելոյն։ Ահա նուիրատուների անունները.—տիկին Թագուհի Յովհաննէսեանց 10 ռուբլ, տ. Նատալիա Մելիք-Փաշայեանց 3 ր., տ. Նատալիա Ցարութիւնեանց 6 ր., տ. Սոֆիայ Մելքումեանց 1 ր., տ. Աննա Շահումեանց 1 ր., տ. Եղիսաբէթ Միրզայեանց 1 ր., տ. Ովսաննայ Ավթանդիլեանց 1 ր., պարոնայք Ալէքսանդր Մելիք-Փաշայեանց 10 ր., Դաւիթ Միրիմանեանց 10 ր., Աբրահամ Ուսնջիեանց 15 ր., Գրիգոր Վէքիլեանց 10 ր., Զոհրաբ Կոստանեանց 25 ր., Պետրոս Յովհաննէսեանց 25 ր., Յովհաննէս Ցարութիւնեանց 20 ր., Գրիգոր Մկրտումեանց 10 ր., Արսէն Միրզայեանց 5 ր., Յակոբ տէր Յովհաննիսեանց 3 ր., Գաբրիէլ Մելքումեանց 3 ր., Գէորգ Շահումեանց 1 ր., Սողոմոն Ղասապեանց 25 ր. և Խաչատուր Ղըլըթչեանց 25 ր.։

Աղէք. Մելիք-Փաշայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ որ մի երիտասարդ սպանիացի ջութակ ածող, պ. Զէրէզատէ մեծ աղմուկ է հանում մայրաքաղաքում իր հրաշալի խաղով։ Պարոնի ածելու ժամանակ թատրոնի դահլիճը միշտ լի է լինում։ Գները թատրոնում շատ բարձր են լինում երիտասարդ երաժշտի կոնցերտի ժամանակ, այնպէս որ Ս. Պետերբուրգի Մարիինսկի թատրոնի մէջ կոնցերտ տալու ժամանակ Զէրէզատէ մի գիշերից 4000 ռուբլ զուտ արդիւնք ունեցաւ։ Մեր թղթակիցը մեզ գրում է որ Ալէքսանդրեան թատրոնը, որտեղ գլխաւորապէս օպերէտներ են տալիս, գրեթէ միշտ դարդակ է։ Պետերբուրգցին զզվել է մանաւանդ Օֆէնբախի օպերէտներից և այժմ մայրաքաղաքի բնակիչները սաստիկ սկսել են սիրել ծանր և պատմական դրամաներ։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 28-ին մի կազակ ցերեկով կօշիկներ է գողանում կօշկակարի խանութից։ Երբ կօշկակարներից մի քանիսը հասնում են կազակին կօշիկները խլելու համար, նա փայտով խփում է մի կօշկակարի գլխին, որ նոյն դիշերը վախճանվում է։ Կազակը արդէն կալանաւորված է։ Նոյն օրը դերձակ Ս. Ղարիբեանը ատրճանակով վիրաւորում է իր փոքր աշակերտին։ Վիրաւորելու պատճառը յայտնի չէ։ Մի և նոյն դիշերը մի թուրք դիշերապահ վերադառնալով տուն, գտնում է այնտեղ իր անկողնի մի տեղապահ։ Թուրքը այդ անպատուութիւնը չէ համբերում, կնոջը հրացանով է վիրաւորում, իսկ տեղապահին խանջալով։ Ասում են վերքերը վտանգաւոր են»։

—

Մեզ գրում են ՔՈՒԹԱՅԻՍԻՑ. «Վերջին օրերը այստեղ եղանակը փոփոխական է։ Անձրևները շուտ են գալիս։ Մարտի 3-ին ձիւնախառն անձրև եկաւ։ Ուտելեղէնները չափազանց թանգացել են»։

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ հաղորդում են, որ այնտեղի մի քանի հայ տիկիններ ստորագրութիւն են բաց արել։ Հաւաքած դումարով մտադիր են ուղարկել Թիֆլիսի Գայեանեան օրիորդաց ուսումնարանը մի աշակերտուհի այն պայմանով որ նա ուսումը աւարտելուց յետոյ Քութայիսի օրիորդաց ուսումնարանի վարժուհու պաշտօնը կատարի։

—

ՓՕԹԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի մաքսատունը փայտաշէն է։ Եթէ հրդեհ պատահեց, շատ վաճառականներ կը վնասվեն։ Մաքսատանը ամեն ժամանակ մեծ քանակութեամբ ապրանք է լինում դիզված։

—

Շնորհակալութեամբ ստացանք «Նուէր Քեսաբ գեղջցիներին» վերնագրով գիրքը, հեղ. Գրիգոր Տէր-Մելքիսեդեկեանցի։ Գրքի գինն է 15 կ.։ Ծախվում է «Կենտրոնական» և «Կովկասեան» գրավաճառանոցներում։

—

Ամբրոսիոս վարդապետ Ռուբինեան խնդրում է մեզ յայտնել, որ քարոզելու է եկող կիրակի մարտի 11-ին ճաշուայ պատարագին Հալաբար թաղի Շամքորեցւոց եկեղեցում, իսկ երեկոյեան Նորաշէն եկեղեցում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Թողութեան հարցը մի քրիստոնէավայել վճիռ ստանալուց յետոյ, այժմ Վէրսայլի պարլամենտի առաջ երևան է գալիս քաղաքային գլխաւոր ոստիկանութեան հարցը։ Սրանից մի քանի շաբաթ առաջ «Lanterne» անունով լրագիրը ամբաստանել էր քաղաքային գլխաւոր ոստիկանութեանը, որ իբր նա է եղել պատճառը, որ քննողական մասնաժողովը հրաժարվել է իր պաշտօնից։ Այս ամբաստանութիւնը պաշտօնապէս ներկայանում է պատգամաւորների ժողովին. պատգամաւորների ժողովը սկզբից կամենում էր առանց հետևանքի թողնել այդ ամբաստանութիւնը, բայց տեսնելով, որ ներքին գործերի մինիստրը զգալի կերպով խմորված է այդ ամբաստանութեան մէջ, և որ նոյն իսկ մինիստրը ինքն էլ անձամբ պահանջեց, որ այդ հարցը օրական կարգի անցնեն, ամբաստանութեան բոլոր կէտերի մասին իրանից բացատրութիւն պահանջեն, ուստի ժողովն էլ յարգեց պ. Մարսէրի խնդիրը և այդ հարցը այժմ զբաղեցնում է Վերսայլի պարլամենտին։ Պ. Մարսէր ժողովի մէջ ասաց, թէ չը նայելով, որ այդ ամբաստանութեան մի քանի կէտերը կպչում են նրա մասնաւոր առտնին կեանքին, այնու ամենայնիւ, իբրև պետական մարդ, նա պատրաստ է նոյն իսկ այդ կէտերի մասին էլ պատասխաններ տալ։ Ամենքը մեծ անհամբերութեամբ սպասում էին հետևեալ նատին իմանալու թէ Մարսէր ինչ բացատրութիւններ կը տայ։ Հասաւ ցանկացած օրը, և պ. Մարսէր բարձրացաւ ամբիոնը պատասխանելու պ. Լիսբոնի հարցուփորձին։

Պ. մինիստրը սկսում է ասելով, որ նա իրան բոլորովին երջանիկ է համարում, որ այդ վեմ ժամին կարողանում է հարկաւոր եղած բացատրութիւններ տալ Ֆրանսիային, իր պաշտօնակից անդամներին և բոլոր նրանց, որոնք այնպիսի հետաքրքրութեամբ կամենում են լսել իր բացատրութիւնները. նա յիշեցրեց յարգելի ժողովին քաղաքային ոստիկանութեան այն անձնուէր գործունէութիւնը, որ պատիւ է բերում ամեն մի կրթված եւրոպական պետութեան, ուրեմն ի՞նչ է պատճառը, որ այդպիսի գեղեցիկ վարչութեան դէմ յարձակմունքներ են լինում. պ. մինիստրի կարծիքով, այդ երևոյթը հասարակական կարծիքի արտայայտութիւն չէ,—դա ստոր ամբոխի կաշառված ձայն է։ Արդարադատութիւնը դատեց ամբաստանութիւնը, և դատապարտեց լրագրին, բայց այդ բաւական չէ. պ. Մարսէրի կարծիքով դատել, դատապարտել անում են ամեն տեղ, նոյն իսկ այն միապետական երկրներում, ուր միահեծանի կամքը օրէնք է։ Ֆրանսիական հանրապետութիւնը իրաւունք չունի դատապարտելու, եթէ նոյն իսկ դատապարտվածի յանցանքը ակնհայտ աշկարա լինի։ Պ. Մարսէր գեղեցիկ կերպով բացատրում է ասելով. «ի՞նչ անենք, թէ հանրապետութիւնը այսօր իրան ձեռքի տակ ունի պատժիչ զօրութիւնը, ի՞նչ անենք, թէ նա հպարտ կարող է հրամայել Ֆրանսիական հանրապետութեան երդուեալ քաջ բանակներին. մեր հանրապետութեանը պատիւ չի բերի կամայականաբար գործ դնել այն ոյժը, որ հայրենիքը իր վերջին ընտրութիւններով, այնպիսի վստահութեամբ հաւատաց նրան։ Հանրապետութիւնը երբէք չի համաձայնվի ի չարն թիւն չէ նշմարվում. այս դէպքում ծնողները նրան չեն զրկում։

Աղջիկը արդէն եօթ—ութ տարեկան է. հասել է ժամանակը, որ պէտք է մի բան սովորի։ Դժբաղդաբար մեր գիւղերում դեռ չը կան աղջկանց դպրոցներ և եղածները այնքան փոքրաթիւ են, որ պէտք է բացառութիւն համարել։ Նրանց ուղարկում են շատ գիւղերում մի տեսակ կանանց մօտ, որ կոչվում են «ուստայ» (վարպետ), որոնք վարժուհու պաշտօն են կատարում։ Վարժուհու մօտ օրվայ մեծ մասը աշակերտուհիները զբաղված են լինում նրա տնային գործերով. դա մի կողմից վարժեցնում է նրանց տնտեսութեան մէջ։ Երբ գործերը վերջացել էին, վարպետուհին նստացնում է նրանց իր բոլորտիքը և սովորեցնում է կարել, հիւսել և ուրիշ ձեռագործութիւններ։ Կարդալ նրա մօտ չեն սովորում, որովհետև խիստ հազիւ է պատահում, որ այդ տեսակ վարժուհիները գրագէտ լինէին։ Վարպետուհին և դաստիարակի պաշտօն է կատարում, ծեծում է և պատժում է իր սանիկներին, երբ նկատում է մի անկարգութիւն։ Ամեն մի այսպիսի վարժուհու մօտ հաւաքված են լինում հնգից մինչև տասն կամ աւելի աշակերտուհիներ, որոնց ծնողներից ստանում է նա իբրև վարձ տօն օրերում զանազան ընծաներ։ Այստեղ աղջիկը պատրաստում է այն բոլոր հագուստները և ուրիշ ձեռագործները, որ պակվելու ժամանակ պէտք է օժիտը կազմէին։ Եւ այս պատճառով վարժուհին ստանում է առանձին պարգև փեսայի կողմից, երբ հարսանիքի ժամանակ նորահարսի ձեռագործները հանդէսի էին տրվում և կնիկներից հաւանութիւն էին գտնում։ Վարժուհիները լինում են ըստ մեծի մասին փորձված և հասակ առած կանայք. նրանք շատ անգամ գործելու միսում է սողալ յատակի վրա, կարծես թէ պրռելու մօրը, և այսպէս հասնում է թոնիրի մօտ, մի շարժում բաւական է, որ նա ընկնի այդ կրակի խորի մէջ.... ինձ շատ անգամ է պատահել տեսնել գիւղերում կկտով չափ խորովված երեխաներ, կամ չափահասներ, որոնց երեսի և ձեռների վրա դեռ երևում են վէրքի նշանները. երբ հարցնում ես պատճառը, պատասխանում են, թէ երեխայութեանս ժամանակ ընկել եմ թոնիրի մէջ։ Ընկնողները մեծ մասամբ ածուխ են դառնում։ Բայց աղջկայ մանը, ինչ կերպով և հասնելու լիներ, պատճառում է ծնողներին ներքին բաւականութիւն։ Աւելորդ բեռը հեռացվում է ընտանիքից։

Երբ երեխան մէկ տարին լրացնում է, մայրը նրան իր հետ է առնում, երբ պէտք էր գնալ դուրսը գործելու։ Այդ նրան շատ զուարճացնում է։ Նստած մի ծառի ներքոյ, դալար խոտերի վրա, նա հանդարտ և հետաքրքիր աչկներով նայում է մօր աշխատութեանը։ Շատ անգամ անձրևը և կարկուտը պատահում են նրան նոյն դրութեան մէջ, և փոքրիկ գեղջկուհին երեխայութիւնից սկսում է սովորել եղանակների խրատութիւններին։ Ամեն անգամ, երբ լաց է լինում նա, մայրը աշխատում է հանգստացնել ապտակներով։ Մի անգամ ես առիթ ունեցայ հարցնել մօրից, որ սաստիկ ծեծում էր երեխային, անդադար կրկնելով «ուստ», «սուտ», թէ ինչու է այնպէս վարվում։ Նա բաւական սառնասրտութեամբ պատասխանեց. «ծեծում եմ, որ ձէնը կտրի»։ Թէև ցաւի սաստկութիւնից նա աւելի լաց էր լինում, աւելի ճիչ էր բարձրացնում, բայց մայրը չէր ուզում հասկանալ, թէ ինքն է պատճառը։ Բայց աղջիկը շուտով է հաշտվում իր վիճակի հետ. նա մանկութիւնից հասկանում է, թէ ինքը իրաւունք չունի պահանջել, որ իր հետ մեղմ լինէին, քաղցրութեամբ վարվէին, որովհետև նա ա ղ ջ ի կ է։

Երբ փոքրիկ գեղջկուհին սկսում է ոտքի վրա կանգնել, ման դալ, մայրը այլ ևս չէ նայում նրա վրա. «նա իր գլուխը կը պահէ» ասում են, և թոյլ են տալիս մինակ տունից դուրս գալ և գիւղական երեխաների հետ խաղալ փոշիների և ցեխերի մէջ։ Փոյթ չէ, եթէ ամբողջ օրը նա չէր վերադառնայ, նրան մինչև անգամ մոռանում են, և ուրախ են, որ տանը մօր գործերը չէր խանգարում։ Իսկ 4—5 տարեկան հասակում նրան արդելում են տղաների հետ խաղալ։ Գիւղերում շատ անգամ պատահում են բոլորովին մերկ երեխաներ, որ թափառում են փողոցներում արեգակի այրող ճառագայթների ներքոյ, կամ թաւալվում են ճահիճների ու մօրուտների (лужа) մէջ. բայց նրանց թւում հազիւ թէ կարելի է մի աղջիկ տեսնել նոյն դրութեան մէջ։ Սեռական խտրութիւնները, սկսեալ մանկութիւնից, սովորեցնում են փոքրիկ աղջիկներին տղայների մօտ արձակ չը լինել։ Ո՞վ չէ տեսել Թիֆլիսում, Սաղի վրա, մալականի աղջիկները և կնիկները, տղամարդերի հետ խառն, բաղմութեան աչքի առջև, լողանում են Կուր գետի մէջ։ Բայց մեր գիւղերում անկարելի է տեսնել, որ մինչև անգամ 4—5 տարեկան աղջիկները իրանց հասակակից տղայների հետ լողանային առուակների մէջ։ Աղջիկները լողանում են իրանց սեռակիցների հետ և ընտրում են առհասարակ ծածուկ տեղեր, կամ երբ մութը բաւական պատել էր երկրի վրա։ Տղայները թէև աւելի սիրվում են ծնողներից, բայց միշտ կը տեսնէք նրանց կիսամերկ, կեղտոտ և պատռոտած շորերով։ Բայց աղջիկը, չը նայելով իր ստոր նշանակութեանը, համեմատաբար աւելի մաքուր հագնված է լինում, նրա վրա մերկութիւն չէ նշմարվում. այս դէպքում ծնողները նրան չեն զրկում։

Աղջիկը արդէն եօթ—ութ տարեկան է. հասել է ժամանակը, որ պէտք է մի բան սովորի։ Դժբաղդաբար մեր գիւղերում դեռ չը կան աղջկանց դպրոցներ և եղածները այնքան փոքրաթիւ են, որ պէտք է բացառութիւն համարել։ Նրանց ուղարկում են շատ գիւղերում մի տեսակ կանանց մօտ, որ կոչվում են «ուստայ» (վարպետ), որոնք վարժուհու պաշտօն են կատարում։ Վարժուհու մօտ օրվայ մեծ մասը աշակերտուհիները զբաղված են լինում նրա տնային գործերով. դա մի կողմից վարժեցնում է նրանց տնտեսութեան մէջ։ Երբ գործերը վերջացել էին, վարպետուհին նստացնում է նրանց իր բոլորտիքը և սովորեցնում է կարել, հիւսել և ուրիշ ձեռագործութիւններ։ Կարդալ նրա մօտ չեն սովորում, որովհետև խիստ հազիւ է պատահում, որ այդ տեսակ վարժուհիները գրագէտ լինէին։ Վարպետուհին և դաստիարակի պաշտօն է կատարում, ծեծում է և պատժում է իր սանիկներին, երբ նկատում է մի անկարգութիւն։ Ամեն մի այսպիսի վարժուհու մօտ հաւաքված են լինում հնգից մինչև տասն կամ աւելի աշակերտուհիներ, որոնց ծնողներից ստանում է նա իբրև վարձ տօն օրերում զանազան ընծաներ։ Այստեղ աղջիկը պատրաստում է այն բոլոր հագուստները և ուրիշ ձեռագործները, որ պակվելու ժամանակ պէտք է օժիտը կազմէին։ Եւ այս պատճառով վարժուհին ստանում է առանձին պարգև փեսայի կողմից, երբ հարսանիքի ժամանակ նորահարսի ձեռագործները հանդէսի էին տրվում և կնիկներից հաւանութիւն էին գտնում։ Վարժուհիները լինում են ըստ մեծի մասին փորձված և հասակ առած կանայք. նրանք շատ անգամ գործելու մի-

*) «Քառասունքի» սովորութիւնը այժմ շատ տեղերում անհետանալու վրա է։

գործ ածել երկրի դեպի ինքն ունեցած անդրդուելի վստահութիւնը։

Այս բոլոր ասածներից յետոյ, աւելացրեց պ. Մարսէր, ես կամենում եմ որ «Lanterne» լրագրին դատապարտելուց յետոյ, ժողովը աշխատէ հասարակական յուզված կարծիքը անդորրացնել։ Եւ հէնց այս նպատակով էր, որ ես այնքան եռանդով պահանջեցի, որ այս հարցը օրական կարգի անցնի։

Սրանից յետոյ, պ. Մարսէր մի քանի գովաբանութիւններ արաւ այն հանրապետութեանը, որին նա 1871 թուից ի վեր, այնքան հաւատարմութեամբ ծառայել է, յետոյ նա շնորհակալութիւն արաւ ժողովին, որը այնքան բարեմիտ եղաւ, որ յարգեց իր իրաւացի պահանջը։ Բացի այս նա աւելացրեց, որ եթէ «Lanterne» նրան այսպէս ամբաստանել է, դրա պատճառն այն է, որ նա քաղաքական հակառակորդ է իրան—մինիստրին։

Իսկ միւս անձնական ամբաստանութիւնների մասին, ժողովը նրան արգելից պատասխանելու, ասելով, որ դա ժողովին չէ վերաբերում։ բայց մինիստրը խնդրեց, որ անպատճառ ընդունեն դրա այդ խնդիրն ևս, որովհետև այդ ամբաստանութիւնների մէջ կան այնպիսի կէտեր, (ինչպէս օրինակ այն զբաղարտութիւնը, որով նա ամբաստանվում է, թէ նա, առանձին դաշն կապելով ֆինանսական ազդեցութիւն ունեցող մարդոց հետ, հարուած է տալիս երկրի ֆինանսներին.), որոնք ազատում են նրան հասարակական կարծիքի առաջ, հետևաբար և անդամալոյծ են շինում նրա հասարակական գործունէութիւնը։ Պ. Մարսէրի այդ պահանջի համեմատ, քուէարկութիւն եղաւ, որի մէջ վճռվեցաւ, որ ժողովը կը զբաղվի այդ հարցով և հետևեալ նստում։

ԱՆԳԼԻԱ

Ներկայ պատերազմները հետզհետէ ծանր հետևանքներ են ցոյց տալի անգլիական հասարակ ժողովրդի վրա։ Գործարանների մէջ աշխատութիւնները փոքր առ փոքր նուազում են. ուրեմն կարելի է հեշտ եզրակացնել թէ ինչ կը լինի խեղճ գործաւոր դասակարգի վիճակը։ Անգլիայում գրեթէ բոլոր ստորին դասակարգի ժողովուրդը, շատ անշան բացառութեամբ, ապրում է միայն գործարաններից ստացած պարէնով. և պատերազմները սաստիկ զարկ են տուել այդ բազմաթիւ գործարաններին, ուրեմն և քսան հազարներով առողջ, աշխատասէր մշակներ մնացել են առանցօրական հացի. այդ ողորմելիներից շատերը ընտանիքի հայրեր են, և նրանց բոլոր ապրուստի միջոցը իրանց քրտնաջան աշխատանքն է...

Աւելորդ է ասել, որ կապիտալիստ հարուստ լորդը խաղաղութեան ժամանակ հարստահարելով խեղճ մշակին, իր անթիւ ստերլինգների վրա նոր ստերլինգներ էր աւելացնում, և այդ բոլորից նա հազիւ միայն այնքան մասն էր հանում խեղճ մշակի համար, որ նա շարունակէ ապրել, որպէս զի հետևեալ օրն էլ նա պէտք գայ գործարանում... Լորդի այս վարմունքը մշակի հետ, մեզ ակամայ յիշեցնում է այն կալուածատիրոջ կովը, որի համար տէրը փող է ծախսում, խոտ է դընում, որպէս զի հետևեալ օրը նոյնպէս նա նրան առատ կաթը տայ, և որից մի քանի ամիս յետոյ նա մի գեղեցիկ որթ է սպասում...

Որպէս զի ընթերցողը մի ճիշտ գաղափար կազմէ թէ որ աստիճան գարշելի է այդ լորդերի վարմունքը դէպի ժողովրդի խեղճ գործաւոր դասակարգը, մենք կը նկարագրենք մեր ընթերցողներին հետևեալ տխուր պատկերը, որը մենք քաղում ենք մի ռուսական լրագրից, և որի մասին մենք խոր համոզված ենք, որ դա գրված է առանց որ և է քաղաքական դիտաւորութեան։

Պատկերը ներկայացնում է Լօնդոնի մի լայն և ծառազարդ փողոց, որի երկու եզերքների երկայնութեամբ շարված են երաշարկեայ և քառաշարկեայ փառաւոր շէնքեր։ Գիշեր է։ Եղանակը ցուրտ է։ Ընդմիջվող քամին, սուր անկիւնի տակ փչելով, աւելում է փողոցները։ Փողոցի մի ծայրում, սպիտակ յատակի վրա նշմարվում է մի սև ստուեր։ Նա առաջ է գնում ծանր և դողդոջուն քայլերով. երբեմն-երբեմն, վայր չընկնելու համար, նա թիկնէ է տալի մերձակայ պարտէզը շրջապատող երկաթէ վանդակներին, բայց սաստիկ սառնութենից, նա մի ակամայ շարժուածքով ձեռքերը յետ-յետ է քաշում։ Ահա, նա արդէն մի հրանալի լուսաւորված դրան առաջն է։ Դա մի երիտասարդ կին է, որի կենսական թարմ ոյժերը դեռ հզօր կերպով մաքառում են վերջին թշուառութեան դէմ։—Այստեղ գոնէ ձիւն չը կայ, կամաց շշնջում է նա, և ընկնում է մաքուր աւազով փռած շեմքի վրա։

Դալիս է քաղաքապահ զինուորը։ Նա սկըսում է նրան արթնացնել. հրում է ոտքով, բռնում քաշում է ուսից,—կինը մնում է անշարժ. վերջապէս նա նայում է նրա երեսին,—նրա երեսը կապոյտ սառոյց է կըրած...

Զինուորի սուլիչի ձայնին գալիս են պատգառակաւոր մարդիկ, որոնք դնում են պատգառակի վրա երիտասարդ կնոջ սառը-անշնչացած դիակը...

Երկու օր յետոյ, լրագրներում կարդում էք. «տիկին X մեռաւ ցրտից և կերակուրի պակասութենից»...

Այս մեր պատմածը պատահական դէպք չէ. դուք կը տեսնէք Լօնդոնի լայնատարած փողոցներում հազարաւոր այսպիսի զոհեր. և այս բոլոր չարիքը առաջ է գալի օրական հաց չունենալուց, իսկ օրական հաց չը կայ, որովհետև աշխատանքը վարձատրված չէ. աշխատանքը վարձատրված չէ, որովհետև կապիտալիստ լորդը հարստահարում, ծծում է թշուառ գործաւորի արդարացի վաստակը։ Եւ այդ հրէշները դեռ էլի երես ունեն ազատ խղճմտանքով ասելու. «Փորոսը ցրտից քաղցից մեռնում է, Կիրակոսը ինչով է մեղաւոր....»

Այսքան թշուառութիւններից յետոյ էլ դեռ Աֆղանիստանի և Աֆրիկայի աւերիչ պատերազմներն էլ օրից սր աւելի և աւելի ծանրանում են Մեծ-Բրիտանիայի ձակատագրի վրա... Քանի՞ սուր-սուր ու արիւնոտ փշեր կան լորդ-Բիկոնսֆիլդի յաղթական քաղաքական պսակի մէջ....

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք Թիֆլիսցի պ. Եադոր Գրիգորեան Յարութիւնեանցից յօգուտ «Արարատեան ընկերութեան 10 ռուբլի, որ պարոնը պարտաւորվում է իւրաքանչիւր տարի հասցնել յիշեալ ընկերութեանը։

* * *

«Մշակի» մէջ այժմ տպվող «Հայ կին» վերնագրով յօդուածի առիթով մենք պէտք է յայտնենք մեր համակրութիւնը մեր մէջ թէ քաղաքներում և թէ գիւղերում երկսեռ ուսումնարանների հիմնելու մտքին։ Թիֆլիսի գերմանական Կոլոնիայի եկեղեցու գաւթում հիմնված գերմանական ուսումնարանը նորերումս այցելելով, մենք ակամայ յիշեցինք որքան նախապաշարված են դեռ մեր հայերը։ Գերմանական դպրոցում մի և նոյն դասատան մէջ նստած են աղջիկները սենեակի աջ կողմը և տղաները սենեակի նստարանների ձախ կողմը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 մարտի։ Կոմս Լօրիս-Մելիքով մարտի 4-ից հեռագրում է, որ Վէյլեանկա աւանում ժանտախտից առողջացածների թիւը 81 է. տեղի հողային և կըլիմայական պայմանները, բնակիչների բարեկեցութիւնը, բնակարանների ընդարձակութիւնն ու մաքրութիւնը պատճառ են տալի կարծելու, որ ժանտախտը դրսից է բերված. ժանտախտով այլ ևս հիւանդացողներ չը կան։

ՍԷԳԷԴԻՆ, 5/17 մարտի։ Քաղաքի 10,000 շէնքերից 3,200 տներ քանդվեցան, բացի այդ քանդվեցան և ուրիշ 4,800 բնակեցրած տներ. 1,900 մարդիկ զոհվեցան։

ՎԻԷՆՆԱ, 5/17 մարտի։ Ֆրանց Յովսէփ կայսրը Սէգէդին գնաց. Տիսա գետի մէջ ջրի մակերևոյթը իջաւ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 մարտի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 55 կ., երկրորդ 96 ր. 50 կ., երրորդ 95 ր. 75 կ., չորրորդ 95 ր. 75 կ., ներքին փոխառութեան 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 239 ր. 25 կ., երկրորդ 236 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 94 ր., երկրորդ 94 ր., ոսկի 8 ր. 38 կ.։ Թիֆլիսի կալուածական բանկի գրաւական թերթը արժէ 94 ր. 55 կ.։ Տրամադրութիւնը ամուր է.

Խմբագիր—Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ջոցին իրանց սանիկների ուշադրութիւնը զբաղեցնում են հէքիաթներով, առակներով և առածներով. իսկ երբեմն բացատրում են աշակերտուհիներին զբաղեցնող երևոյթները, կամ մեկնում են երազներ։ Այս շկոլայից նրանց գլուխները լեցնվում են անթիւ նախապաշարմունքներով։ Աղջիկները երթևեկում են վարժուհու մօտ մինչև իրանց մարդի գնալը։ Պատահում է, որ աղջիկներին վարժուհու մօտ չեն ուղարկում. նրանք սովորում են տանը կամ մօր և կամ հարսներից մէկի դաստիարակութեան ներքոյ և կամ ոչինչ չեն սովորում.

Չէ կարելի մի քանի խօսք չասել գիւղական օրիորդաց դպրոցների մասին. նրանց երկու տեսակի կարելի է բաժանել. մէկը՝ շատ չէ զանազանվում մեր վերոյիշեալ վարպետուհու դպրոցից.—մի կին, որ հազիւ գիտէ գրել կարդալ, հաւաքում է իր մօտ աղջիկներ և սկսում է ուսում տալ. նրանք նստած են լինում յատակի վրա, նոյնպէս շարված վարժուհու բոլորտիքը, կամ խօսում են, կամ կարդում են։ Միւսը, որ կոչում ենք կանոնաւոր դպրոց, ուր աշակերտուհիները երկար նստարանների վրա են սովորում, կարճով են գրում, ուր վարժուհին միայն հսկող է, իսկ դաս են տալիս վարժապետները,—այսպիսի դպրոցներ մի քանի գիւղերում միայն կարելի է գտնել։ Առհասարակ գիւղացին նայում է դպրոցին որպէս մի անբարոյականացնող հիմնարկութեան վրա։ Այս կարծիքին պատճառ է տուել նախ, ընտանեկան փակ կեանքը, որ չէ ներում հասակ առած աղջկան հրապարակ հանել, երկրորդ, դպրոցում սովորած աղջկայ անմիաբանութիւնը ընտանիքի նահապետական պայմանների հետ, իսկ երրորդ, դպրոցների վատ կազմակերպութիւնը և մասամբ վարժապետների դայթակղեցուցիչ վարքը։ Ոչինչ այնպէս չէ կոտրում մի լաւ հիմնարկութեան նշանակութիւնը ռամկի աչքում, որպէս նրա մէջ գործողների չար օրինակը։ Գիւղացին իր աղջիկը տալիս է դպրոցը շատ փոքր հասակում, այսինքն այն հասակում, որ նրան կարելի է ամեն մարդու մօտ թողնել։ Բայց հէնց որ աղջկայ կուրծքը բարձրանում է, նա 12—13 տարեկան է դառնում, խսկոյն դուրս է բերում, ամենեին չը նայելով, թէ ոչինչ չէ սովորել։ Նա սովորում է, իրաւ, մասնաւոր գրել կարդալ, որը հօր տունը գառնալուց յետոյ անգործածութիւնից համարեա մոռանում է։ Խիստ սակաւ են այն դպրոցները, ուր ուսուցանում են հաշուել, աշխարհագրութիւն և քրիստոնէական վարդապետութիւն։ Մեր գիւղական դպրոցների անբաւականացուցիչ վիճակը գլխաւորապէս այն բանի մէջ պէտք է որոնել, որ թէ աշակերտները և թէ աշակերտուհիքը երկար չեն մնում դպրոցում։ Վերջինների, այսինքն աշակերտուհիների շուտ դուրս տանելու պատճառը յայտնի է, բայց տղայներինը բոլորովին այլ է.—ծնողքը կամենում են օգուտ քաղել նրանց աշխատութիւնից իրանց գիւղատնտեսական գործերում, և այս պատճառով տարուայ այն եղանակներում, երբ դաշտումը աշխատութիւն կայ, մանուկներին չեն թողնում դըպրոցում։ Նա սովորում է գլխաւորապէս ձմեռը, և տարուայ մնացած ժամանակում սովորածը մոռանում է։

Աղջիկից շատ գործ չէ պահանջում գիւղացին, միայն մտածում է շուտ մարդու տալ. եթէ դըպրոցը նպատակայարմար լինէր, գիւղացին կը ցանկանար, որ իր զաւակը այնտեղ պահուէր մինչև պսակվելը։ Նա կը թողնէր աղջկան դպրոցում, որպէս մինչև մարդու գնալը թողնում է վերև յիշած վարպետուհու մօտ, և ընաւ կասկած չէր ունենայ, թէ իր զաւակը կը փչանայ այնտեղ։ Բայց ինչ պէտք է արած, որ աղջկանց դպրոցները նպատակայարմար լինէին։ Իմ կարծիքով կրթութեան գործի մէջ պէտք է ի նկատի ունենալ ժողովրդի սովորութիւնները. քանի որ ժողովուրդը դեռ անպատշաճ է համարում իր աղջկայ վիճակը տղամարդ-վարժապետի ձեռքը յանձնել, քանի որ այս վերջինը այնքան անընդունակ է, որ իր ազնուութեամբ չէ կարողանում ռամկի վստահութիւնը շահել,—մնում է մի հնար գիւղացի աղջիկներին դպրոցի հետ կապելու, այն է, որ փոխանակ տղամարդերի կանայք լինէին նրանց ուսուցիչները։ Ես այդ փորձով գիտեմ, որ կանանց մօտ գիւղացի աղջիկները աւելի լաւ են սովորում և աւելի ազատ են զգում իրանց, մինչդեռ տղամարդերի մօտ սեղմված են և անհամարձակ, մանաւանդ կոշտ-կոպիտ մեր «փալիֆայների» մօտ, որ պատժական քանոնը ձեռքից չեն գցում, չը նայելով, որ քնքուշ սեռի հետ գործ ունեն։ Ես դեռ մի օրիորդաց դպրոց եմ ճանաչում, ուր նախակրթարանի մէջ միայն աղջիկները տղայների հետ խառն են սովորում, բայց բարձր դասատներում բաժանվում են։ Ցանկալի կը լինէր, որ բոլոր գիւղական դպրոցներում աղջիկները և տղայները միասին սովորէին. դա երկու օգուտ կունենար, առաջինը, որ ժողովուրդը փոխանակ երկու դըպրոցների կը պահէր մէկը միայն և ազատ կը մնար աւելորդ ծախսերից, իսկ երկրորդը, աղջիկները և տղայները միասին սովորելով, կընտելանային միմեանց, այսպէսով կը կազմվէր նրանց մէջ քոյր-եղբայրութիւնը, կը լինէին մէկ ընտանիքի—դպրոցի զաւակներ, և դա միայն կարող էր փչրել մեր մէջ տիրող հին նախապաշարմունքի կապանքը, որ աղջկանից պատրաստում է կանանոցի գերի և խլում է նրանց տղամարդի հասարակութիւնից։ Եւ այս տեսակ խառն երկսեռ դպրոցները աւելի լաւ կը լինէր, որ կանանց ձեռքը յանձնվէին։ Մեր գիւղերում բարոյականութեան դէմ ամենեին վտանգ չէ կարելի սպասել դպրոցների յիշեալ կազմակերպութիւնից, որովհետև թէ աշակերտները և թէ աշակերտուհիները շատ փոքրիկներ են լինում, բացի դրանից, գիւղական երեխաները աւելի անմեղ և համեստ են լինում քան թէ քաղաքացիները։

Խօսենք այն ժամանակի մասին, երբ ծնողքը փոքրիկ աղջկան դուրս են տանում դպրոցից, կամ վերև յիշած վարժապետուհու մօտից։ Դա նրա հասակի փոթորկային ժամանակն է։ Աղջիկը այժմ 13—14 տարեկան է։ Այդ տարիներում հասունանում է նա և մէնակ տնից դուրս չեն թողնում։ Նա գնում է այգին, պարտէզը, դաշտը, մօր հետ միասին, կամ տան հարսներից մէկի հետ։ Միշտ երկու հսկող աչքեր անպակաս են նրա մօտից։ Նա գնում է աղբիւրից ջուր բերելու հարևանների աղջիկների հետ. մի քանիսը միայն հաւաքվում են և խումբ են կազմում. դրա համար որոշված են վաղ առաւօտեան և երեկոյեան պահերը, երբ փողոցները դատարկ էին մարդիկներից։ Հսկողութիւնը թէև կատարվում է խստութեամբ, բայց աղջիկը չէ նեղանում, և ոչ կարող է երևակայել, թէ դա անվայելուչ էր։ Նա այնպէս համոզված է, թէ այլ կերպ լինել անկարելի էր, թէ իր հասակում անպատշաճ էր աղջկան մինակ տնից դուրս գալ կամ հեռու տեղ գնալ, և անտրտունջ խոնարհվում է սովորութեան առջև։ Աղջիկը միշտ իրան այն դալար ծառի դրութեան մէջ է զգում, որ առանց նեցուկի խսկոյն ցած կընկնէր։

(Կը շարունակվի)

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1879 թուին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի գիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 *рուբլ է*, կէս տարվանը 6 *рուբլ*։ Գրվել կարելի է ՄԻԱՑՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ՍՈՒՆԶԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը. Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱԼԽՏԻ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ՋԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷԲԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՀԱՅՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՕՆԻՆԳԻ ՊՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՑԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵ ՔԱ ԼԱՔԻՔ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ։

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ԵՒ
ՏԱՐԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը սկսաւ յունվարի 8-ին 1879 թուականի։

Մանկական պարտէզը ընդունվում են մանուկներ, երկու սեռի էլ, 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ տարրական դպրոցը 7-ից—12 տարեկանները։

Ուսման ընթացքը յարմարեցրած է միւս դպրոցների ընթացքին, այնպէս որ դպրոցում աւարտողները կարող են մտնել աղայք՝ տղայոց և աղջկունք՝ օրիորդաց դպրոցի առաջին դասատունքը։

Պարտէզն ու դպրոցը գտնվում են Վեր. Ամատունու տանը. №—11։

ՌՈՒՍԱՑ ԹԷՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՑԻՑ նոր ստացվեցան 10000 ֆունտ ֆուչանի և կեսախտի թէյ սեփական փոխանակութեան 1 р. 20 կ. մինչև 8 р. ֆունտը։ Ֆուչանի թէյի համար ինձանից գնողներից շատերը նամակներով շնորհակալութիւն յայտնեցին, յոյս ունեմ ապագայում գնողներից նոյնպէս ստանալ։ Ծախվում է մեծ քանակութեամբ և փոքր։ Փոստայի ծախսը ինձ վրա առնում եմ։ Հասցէն Մելքայէլեան կամուրջ, «Кавказъ»-ի խմբագրատան տակ։ Վաճառական Ա. Պօլոսովին։

5—10

ԵՐԵՒԱՆՈՒՄ Աստաֆիեվսկայա փողոցի վրա քաղաքի կենտրոնում ձեռնտու գնով ԾԱԽՎՈՒՄ Է քարից և կիրից շինած մի ՏՈՒՆ։ Տան մէջ կան տաս ԽԱՆՈՒԹՆԵՐ ամբարանոցներով, սառուցատուն և երեսուն և չորս ՍԵՆԵԱԿ ծառաների բնակարաններով և պատշգամբով տան ամբողջ երկայնութեամբ։ ԲԱԿԻ մեծութիւնը 2000 քառակուսի սաժէն է, բակի մէջ ԱԻԱԶԱՆ կայ։ Տան դիմացի կողմի ԵՐԿԱՑՆՈՒԹԻՒՆԸ 63 արշին է, իսկ ԼԱՑՆՈՒԹԻՒՆԸ նոյն կողմից 24 արշին։ Ամբողջ տունը տարեկան 5600 р. ԵԿԱՄՈՒՏ է տալիս։ Ցիշեալ տունը ԳՆԵԼ ցանկացողները կարող են դիմել Երևան տան տէր Արտեմ Պապիկովին։ Նոյն տան մէջ ցանկանում են յանձնել մէկ ուրիշ ՔԱՂՑՐԵՂԷՆՆԵՐԻ ԽԱՆՈՒԹ, պիտանի բոլոր պարագաներով։ ԱՐՏԵՄ ՊԱՊԻԿԵԱՆՑ։

1—4

ԿՕՐՇԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԵՐԹԵՒԵԿ պատրաստում է երեխաներին ՄԻՋՆԱԿԱՐԳ բոլոր ուսումնարանների ՓՈՔՐ դասատունների համար։ ՁԱՇԻՑ ՍԱՏՈՑ ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ։ Ֆրանսիերէն և գերմաներէն լեզուների գործնական և տէօրետիկական դասեր են տրվում։ Ուսումնարանը գտնվում է Վօրոնցօվսկայա Նարերեժնայա փողոցի վրա, Բելյաեվի նախկին տանը, № 19.

2—3

ՍԵՆԵԱԿՆԵՐ քրէհով են տրվում կահկարասիքով և ծառայով 10 р. մինչև 20 рուբլ ամսական վճարով։ Հարցնել Սապերնայա փողոցի վրա գինուորական գիմնազիայի դիմացը Յարութիւնեանցի № 12 տան մէջ։

1—3

Աղդ

Գառնիկ Ալէքսիանոս Յարութիւնեան, որը մականունը Սարբեան Սիվասցի. Կ. Պոլիս Բերայի թաղը ծնած, 18—20 տարեկան, արհեստը գրաշարութիւն, ինքը բարձրահասակ, երկու տարի է որ անդրկեցի վաճառականի մը հետ ասկէ (Պոլիսէն) եկած շոգենաւով Փոթի երթալու, և անկէ ալ Թիֆլիս անցնելու նպատակաւ ճամբայ եկած օրէս մինչև յայսօր և ոչ մի լուր առնուած է. հայրը մեռած է և մայրը և քոյր մը ունի. ով որ տեսած է յիշեալ երիտասարդը, մարդասիրաբար ազգային լրագրաց իմաց տալու շնորհի ընելը կաղաչուի։

«ՆՈՒԷՐ ՔԵԱՍԻԲ ԳԵՂԵՑԻՆԵՐԻՆ» անունով նոր գուրս եկած բրոշիւրը ծախվում է հատը 15 կոպէկով Թիֆլիսի Կենտրոնական և Զաքարիայ Գրիգորեանի գրավաճառանոցներում։ Հարիւրով առնողներին կը լինի 20% զեղչում, եթէ անմիջապէս դառնան դէպի մեզ այս հասցէով. Тифлисъ Григорію Теръ-Меликсетову. въ Сололакахъ, на Сололакской улицѣ, у Вознесенской церкви, въ д. Михаила Галустова, подъ № 110.

Գրիգոր Տէր-Մելիքսեդեկեան։

Բժիշկ Աւետիք Բաբայեան (Բաբայեվ) ընդունում է հիւանդներին Թիֆլիսի բժշկանոցում չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ջղային և հոգեկան հիւանդութիւններ բժշկելու։ Բացի այդ բժիշկ Բաբայեան (Բաբայեվ) հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հիւանդութիւններ ունեցող կամ էլեկտրականութեամբ բժշկելի աղքատ հիւանդներին։ Հասցէն Սերգիեվսկայա փողոց, տուն Բայանդուրովի։

5—10

ԼԱՐՇԷԻ խանութում Գօլովինսկի հրապարակի վրա № 11 ծախվում են ամեն տեսակ թէ պարսիզային և թէ ծաղիկների ՍԵՐՄԵՐ, որոնք նոր են ստացված և բոլորովին թարմ են։

3—10

Въ Кукахъ, на Исарловской улицѣ въ домѣ № 9 ОТДАЕТСЯ ОДНА БОЛЬШАЯ СВѢТЛАЯ КОМНАТА съ отопленіемъ и прислугой. Спросить въ редакціи «МШАКЪ»

ԿՈՒԿԻԱՑՈՒՄ, Խարլովսկայա փողոցի վրա № 9 տան մէջ քրէհով է տրվում մի ՄԵԾ. ԼՈՒՍԱՒՈՐ ՍԵՆԵԱԿ ՎԱՌԵԼԻՔՈՎ և ծառայով։ Հարցնել «Մշակի» խմբագրատանը։

1—10

ՄԱՐՏԻ 7. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Մարտի 6-ին)

	Р.	Կ.
Ոսկին (զօլոտիմպերիալը)	8	58
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1240	—
Վիպրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 „	233	—
Երկրորդ 5% վիպրիչնի „	229	—
Մարսելի կուրսը 248—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	105	19
Վենայի կուրսը ամէ 113 գլ.	100	—
Դաւրեժի բաթաթը.	5	60
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	315	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու	7	30
„ միւս տեսակը.	7	20
„ չաքարաւազը.	5	40
„ տրանզիտը.	6	20
„ մաքսը վճարած	12	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից.	7	60
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուշի	7	50
„ թարաքամի	4	20
Աղիւրը Շորագալու	1	70
„ Երևանի.	—	—
Գարին	1	—
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքսը Նուխվայ	200	—
Կախեթուն.	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լասը) Ադուլեաց	55	—
Կոֆէն մոկոի.	27	—
„ լիանի	22	—
„ Մարտինկոյին	18	

ՀԵՌԱԳԻՐ

	Р.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա.	4	
Գերմանիա	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ
(Վէրայի վրա № 38)

Ծնողկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 рուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 рուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 рուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանովի։

ԹՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 рուպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 рուպէ։

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գօրի	11. 58	9. 43
Միխայլովո.	1. 29	11. 57
Բիօն	6. 47	
Փոթի	9. 40	
	առաւ.	
Փոթիից	9. 13	
Բիօն	12. 13	
Միխայլովո.	5. 39	1 37
Գօրի.	7. 5	4. 8
Թիֆլիս.	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 р. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 р.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գօրի.	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Բիօն.	9.	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հատարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բաղուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկիլիչի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակ արժէ	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան	8
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակտ վեներական և կաշու հ., Քուշարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակտ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյլս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակտ վեներական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Քուշարեանց սիֆիլիտական և միզային գործարանների։

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակտ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակտ վեներականկաշու հ., Բէյլս աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԵՐԵՒԱՆ. Ց. Ս. Նամակներ ստանալու ապահովագիր չենք տալիս։ Վերջապէս չենք կարող յիշել, եղել է արդեօք հաղարաւոր նամակների մէջ մէկը այդ ստորագրութեամբ։

—ՄՕՍԿՎԱ. Քալանթար. Ցօդուածը ստացանք։ Կը տպենք երբ կը վերջանայ «Հայ կինը» վերնագրով յօդուածի տպագրութիւնը։

—ՓՕԹԻ. Կ. Տ. Ց. Այն տեղեկութիւնները, որոնց դուք հաղորդում էք, վաղուց յայտնի են մեր ընթերցողներին։ Նամակից միայն մէկ լուր քաղեցինք։

—ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ**. Նամակը կը տպենք մի քանի փոփոխութեամբ։ Գուցէ քահանաները ապրելու միջոց չունեն, այդ պատճառով են թուղթ խաղում.

Дозволено Цензурою 6 Марта 1879 г. Тифлисъ Տպարան Ց. Մարտիրոսեանցի Типографія Мартиросіанца